ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ԳՄԳՀ-ՀԲՄԽԾՁԲ-24/4 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՐԱՏԱՊ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՁԵՎՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՆԻՍՏԻ

ք.Գավառ «20» մայիսի 2024թ.

ժամը 11:00

Մասնակցում էին

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Գ.Բոշյան /նախագահ/,
Ա.Ղուրշուդյան, Ն.Մուխսյան,

Բացող անդամներ՝ Ա. Կատվալյան, Գ.Աղլամազյան,

Քարտուղար՝ Ս.Թամամավեյան,

ԳՄԳՀ-ՀԲՄԽԾՁԲ-24/4 ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի մասին

Գ.Բոշյան

1) Գնումների համակարգող /քարտուղար/ Սեդա Թամամավեյանը հայտարարեց, որ Armeps էլեկտրոնային համակարգով հայտ է ներկայացրել 7 /յոթ/ մասնակից՝

N	Մասնակցի անվանումը	Մասնակցի հասցեն, էլ.հասցե
1	«ԱՐՄ ԴՈՐ ՍՏՐՈՅ» ՍՊԸ	ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Ծակքար 5փ., տ.9, Nairi_aleqsanyan@mail.ru
2	«ԷԼԵԿՇԻՆ» ՍՊԸ	ք. Վանաձոր Ավետիսյան փ., 9-1, elekshin2020@gmail.com
3	«Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ	ք. Երևան, Աճառյան 54բ, 375040, llcdorproject@mail.ru, lil.poghosyan17@gmail.com
4	ԱՁ Հրաչյա Մուրադյան	Ք.Գյումրի, Մուսայելյան 2/5 rigelarmenia@gmail.com
5	«ՌԱՖ-ԱՎՈ» ՍՊԸ	ք.Գավառ, Արծրունի եղբ. 85, hergnyan.raf@mail.ru,
6	«ՌԵԳՈՒԼ» ՍՊԸ	Գեղարքունիքի մարզ, գ. Կարմիրգյուղ, haferdgas@mail.ru,
7	«ԹԻՎ 28 ՇՄՇ» ԲԲԸ	ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Ազատության 2, hvarlen@mail.ru,

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

2) Յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտը ըստ չափաբաժինների՝

- «ԱՐՄ ԴՈՐ ՍՏՐՈՅ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել 1-ին չափաբաժնի մասով,
- «ԷԼԵԿՇԻՆ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել 3-րդ չափաբաժնի մասով,
- «Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել 1-ին չափաբաժնի մասով,
- ԱՁ Հրաչյա Մուրադյանը հայտ է ներկայացրել 3-րդ, 4-րդ չափաբաժինների մասով,
- «ՌԱՖ-ԱՎՈ» ՍՊԸ -ն հայտ է ներկայացրել 3-րդ չափաբաժնի մասով,
- «ՌԵԳՈՒԼ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել 4-րդ չափաբաժնի մասով,
- «ԹԻՎ 28 ՇՄՇ» ԲԲԸ-ն հայտ է ներկայացրել 1-ին, 2-րդ, 7-րդ չափաբաժինների մասով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

3) Ուսումնասիրելով ԳՄԳՀ-ՀԲՄԽԾՁԲ-24/4 ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացրած հայտերը պարզվեց.

3.1) «ԱՐՄ ԴՈՐ ՍՏՐՈՅ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին՝

- Հայտով ներկայացված 09.10.2023 թվականին ԳՄԳՀ-ԳՀԾՁԲ-23/33-1 ծածկագրով կնքած նախկինում կատարված նմանատիպ պայմանագրում նշված է ծառայությունների մատուցման ժամկետը պայմանագրի կնքման պահից 45 օրացուցային օր, այն է 24.11.2023 թվականը, այնինչ հանձնման-ընդունման արձանագրություն N1-ում մատուցված ծառայությունների կատարման ժամկետը ըստ պայմանագրով հաստատված գնման ժանակացույցի և փաստացի տողերում նշված է 09.10.2023-24.12.2023, հետևաբար պայմանագրի կատարման ժամկետը խախտվել է 30 օրացուցային օրով՝ այսինքն պայմանագրով սահմանված ծառայությունները մատուցվել են ոչ պատշաճ:
- Հայտով ներկայացված 09.10.2023 թվականին ԳՄԳՀ-ԳՀԾՁԲ-23/34 ծածկագրով կնքած նախկինում կատարված նմանատիպ պայմանագրի 1-ին էջում պայմանագրի կնքման ամսաթիվը գրվել է 09.10.2023թ., պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող հավելվածներում նշված չի պայմանագրի կնքման օրը: Հանձնման-ընդունման արձանագրություն N1-ում մատուցված ծառայությունների կատարման ժամկետը ըստ պայմանագրով հաստատված գնման ժանակացույցի և փաստացի տողերում նշված է 02.10.2023-24.12.2023: Եթե պայմանագրի կնքման օրը համարենք 09.10.2023, ապա կնշանակի, որ պայմանագրի կատարման ժամկետը խախտվել է նվազագույնը 30 օրացուցային օրով՝ այսինքն պայմանագրով սահմանված ծառայությունները մատուցվել են ոչ պատշաճ:

Չի պահպանվել ԳՄԳՀ-ՀԲՄԽԾՁԲ-24/4 ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերի 2.5.1 կետի պահանջները՝ **«Մասնագիտական փորձառություն» չափանիշը**:

3.2) «ԷԼԵԿՇԻՆ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին՝

- Մասնակցի կողմից ներկայացրած հայտի հավելված N1-ում /հրատապ բաց մրցույթին մասնակցելու դիմում-հայտարարություն/ իրական շահառուների կայքեղումը ներկայացված է 2023 թվականի համար, այն ինչ պետք է լինի 2024 թվականի թարմացված տվյալները,
- Մասնակցի կողմից ներկայացրած հայտում բացակայում են հավելված N3-ով մասնակցի կողմից առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին տեղեկանքով ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները:
- Հավելված N3-ում /մասնակցի կողմից առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին տեղեկանք/ նշված չէ բոլոր աշխատակիցների աշխատանքային փորձի գործունեության ոլորտը, պարզապես նշված է «նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ»:

Չի պահպանվել ԳՄԳՀ-ՀԲՄԽԾՁԲ-24/4 ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերի 2.5.2 կետի պահանջները՝ **«Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը**:

3.3) «Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

3.4) ԱՁ Հրաչյա Մուրադյանի ներկայացրած հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին՝

- Բացակայում է հրավերով պահանջվող հավելված N3-ը /մասնակցի կողմից առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին տեղեկանք/,
- Աղասի Խաչատրյանի կողմից ներկայացված համաձայնագրերում բացակայում է փաստաթղթի կազմման ամսաթիվը, մրցույթի ծածկագիրը և հստակ չի թե ո՞ր չափաբաժնի ծառայությունների մատուցմանն է պատրաստվում ներգրավվել աշխատակիցը,
- Միքայել Շարոյանի կողմից ներկայացված համաձայնագրերում բացակայում է փաստաթղթի կազմման ամսաթիվը, մրցույթի ծածկագիրը և հստակ չի թե ո՞ր չափաբաժնի ծառայությունների մատուցմանն է պատրաստվում ներգրավվել աշխատակիցը,

- Հայկ Դեղոյանի կողմից ներկայացված համաձայնագրերում բացակայում է փաստաթղթի կազմման ամսաթիվը, մրցույթի ծածկագիրը և հստակ չի թե ո՞ր չափաբաժնի ծառայությունների մատուցմանն է պատրաստվում ներգրավվել աշխատակիցը:
- Համաձայն հայտում կցված դիպլոմի Հայկ Դեղոյանը ջերմագազամատակարարման և օդափոխության մասնագետ է, և չի կարող ներգրավվել ջրամատակարարման և ջրահեռացման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներին՝ ինչը ներկայացված է համաձայնագրում,
- Ներկայացված չէ հրավերով պահանջվող ջրամատակարարման և ջրահեռացման մասնագետը և իրեն վերաբերվող փաստաթղթերը /անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները/:

Չի պահպանվել ԳՄԳՀ-ՀԲՄԽԾՁԲ-24/4 ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերի 2.5.2 կետի պահանջները՝ **«Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը**:

- ՀՀ ֆինանսների նախարարի 18.08.2020թ. N356-Ն հրամանի համաձայն պարտադիր պահանջ է հանձնման ընդունման արձանագրություններում հաշիվ-ապրանքնագրերի սերիան, համարը և դուրս գրման ամսաթվի առկայությունը, սակայն մասնակցի կողմից ներկայացված նախկինում կատարված նմանատիպ պայմանագրի հանձնման ընդունման արձանագրությունում դրանք բացակայում են: Հղում է արված պայմանագրի տեխնիկական բնութագրին և գնման ժամանակացույցին, որոնք բացակայում են ներկայացված պայմանագրում: Հանձնման ընդունման արձանագրության մեջ տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքում հղում է արված այն արտոնագրին /ԿԱԴ-Ա1-017/, որը նաև նշված է պայմանագրի 1.2 կետում, ինչից գնահատող հանձնաժողովի համար պարզ չի դառնում Կատարողը նախագծի կոնստրուկտորական մասն է կազմել թե՞ նաև ճարտարապետական և ինժեներական մասերը: Վերը նշվածները պարզելու համար անհրաժեշտ է հանձնման-ընդունման արձանագրության անբաժանելի մաս համարվող հաշիվ ապրանքագրերը և պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող տեխնիկական բնութագիրը:
- Հայտում առկա չէ Ա/Ձ Հրաչյա Մուրադյանին պատկանող Քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակման գործունեության լիցենզիաները:

Չի պահպանվել ԳՄԳՀ-ՀԲՄԽԾՁԲ-24/4 ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերի մաս I-ի պահանջները:

- Գնահատող հանձնաժողովի կողմից ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի կայքում առկա լիցենզավորված կազմակերպությունների ցանկի ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ Ա/Ձ Հրաչյա Մուրադյանիը չունի Քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակման գործունեության լիցենզիա և ներդիրներ:
- Հայտով ներկայացվել է Ա/Ձ Սեդրակ Մուրադյանին պատկանող Քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակման գործունեության լիցենզիաները, համաձայնագիրը /առանց ամսաթվի/ լիցենզիա ունենալու և նախագծանախահաշվային աշխատանքներում ներգրավվելու մասին տեղեկատվությամբ՝ առանց որևէ պատվիրատուի և չափաբաժնի նշման:
- Համաձայն 2024 թվականի մայիսի 10-ին ԳՄԳՀ-ՀԲՄԽԾՁԲ-24/4 ծածկագրով հայտարարված հրատապ բաց մրցույթի հրավերի փաթեթի I-ին մասի 4.3 կետի 5-րդ ենթակետի՝ մասնակիցները կարող էին մրցույթին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով), սակայն դա չի կատարվել նրանց կողմից, որովհետև հայտում առկա փաստաթղթերը պետք է հաստատված լինեին կոնսորցիումի բոլոր անդամների կողմից,

3.5) «ՌԱՖ-ԱՎՈ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին՝

- Հավելված N3-ով /մասնակցի կողմից առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին տեղեկանք/ առաջարկվող աշխատակազմում ներգրավված մասնագետի /Էդվարդ Քոչարյան-ճարտարագետ-շինարար/ հաստատած գրավոր համաձայնությունում՝ համաձայնագրում բացակայում է կազմման ամսաթիվը և այն չափաբաժնի անվանումն և/կամ համարը, որին ներգրավվել է նշված մասնագետը:

3.6) «ՌԵԳՈՒԼ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին՝

- Հավելված N3-ում /մասնակցի կողմից առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին տեղեկանք/ նշված չէ բոլոր աշխատակիցների աշխատանքնային փորձի գործունեության ոլորտը, պարզապես նշված է «նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ»: Նույն հավելվածում առաջարկվող աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնություններում՝ համաձայնագրերում բացակայում են այն չափաբաժինների անվանումներն և/կամ համարները, որոնց ներգրավվել են մասնագետները, ինչպես նաև Արմինե Հակոբյանի, Հասմիկ Կիրակոսյանի, Անահիտ Հակոբյանի համաձայնագրերում նշված չէ թե ՞որ ոլորտի ծառայությունների մատուցմանն է ներգրավվելու մասնագետը: Գոհար Մարտիրոսյանի որակավորումը սխալ է նշված /ըստ դիպլոմի՝ ինժեներ-էլեկտրիկ է/:

Չի պահպանվել ԳՄԳՀ-ՀԲՄԽԾՁԲ-24/4 ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերի 2.5.2 կետի պահանջները՝ **«Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը**::

3.7) «ԹԻՎ 28 ՇՄՇ» ԲԲԸ-ի ներկայացրած հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին՝

- Հավելված N3-ում /մասնակցի կողմից առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին տեղեկանք/ նշված չէ բոլոր աշխատակիցների աշխատանքնային փորձի գործունեության ոլորտը, պարզապես նշված է «նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ»: Նույն հավելվածում առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնություններում՝ համաձայնագրերում բացակայում են այն չափաբաժինների անվանումներն և/կամ համարները, որոնց ներգրավվելու են մասնագետները:

Չի պահպանվել ԳՄԳՀ-ՀԲՄԽԾՁԲ-24/4 ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերի 2.5.2 կետի պահանջները՝ **«Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը**:

- Հայտով ներկայացված 28.10.2022 թվականին ԳՄԳՀ-ԳՀԽԾՁԲ-22/16-1 ծածկագրով կնքած նախկինում կատարված նմանատիպ պայմանագրի հավելված 1-ում նշված գնման ժամանակացույցից պարզ է դառնում, որ պայմանագիրը կնքված է Գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա: Ներկայացված պայմանագրում բացակայում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու վերաբերյալ համաձայնագիրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

4) Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման 41-րդ կետի և 2024 թվականի մայիսի 10-ին ԳՄԳՀ-ՀԲՄԽԾՁԲ-24/4 ծածկագրով հայտարարված հրատապ բաց մրցույթի հրավերի փաթեթի I-ին մասի 8.9 կետի պահանջները, **գնահատող հանձնաժողովը որոշեց՝**

- կասեցնել նիստը 1 (մեկ) աշխատանքային օրով և ծանուցել «ԱՐՄ ԴՈՐ ՍՏՐՈՅ» ՍՊԸ-ին, «ԷԼԵԿՇԻՆ» ՍՊԸ-ին, ԱՁ Հրաչյա Մուրադյանին, «ՌԱՖ-ԱՎՈ» ՍՊԸ-ին, «ՌԵԳՈՒԼ» ՍՊԸ-ին և «ԹԻՎ 28 ՇՄՇ» ԲԲԸ-ին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ 22/05/2024թ-ը ժամը 18:00-ն, շտկել վերը նշված բոլոր անհամապատասխանությունները և էլեկտրոնային եղանակով Գավառի համայնքապետարանի էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովին ներկայացնել համապատասխան փաստաթղթերը, դրանք չներկայացնելու դեպքում ԳՄԳՀ-ՀԲՄԽԾՁԲ-24/4 ծածկագրով հայտարարված հրատապ բաց մրցույթի հրավերի 8.21 համաձայն գնահատող հանձնաժողովը անհրաժեշտության դեպքում պաշտոնական աղբյուրներից կճշտի ներկայացված տվյալների իսկությունը:

Վերը նշված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում մասնակցի հայտը կգնահատվի հրավերի պահանջներին չհամապատասխանող (անբավարար) և կմերժվի, իսկ շտկելու դեպքում ոչ գնային պայմանները կգնահատվի հրավերով սահմանված կարգով:

- Գնումների մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն 5-րդ, 6-րդ, չափաբաժինների մասով հայտարարել չկայացած, քանի որ armeps էլեկտրոնային համակրգով հայտեր չեն ներկայացվել;

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

5) Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն թվականի մայիսի 23-ին ժամը 12:00-ին՝ ք.Գավառ, Գր.Լուսավորչի 12 երկրորդ հարկ, 8-րդ աշխատասենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ		
ՆԱԽԱԳԱՀ՝		Գ.ԲՈՇՅԱՆ
ԱՆԴԱՄՆԵՐ՝		Ն.ՄՈՒԽՍՅԱՆ
		Ա.ՂՈՒՐՇՈՒԴՅԱՆ
ԲԱՑՈՂ ԱՆԴԱՄՆԵՐ՝		Ա.ԿԱՏՎԱԼՅԱՆ
		Գ.ԱՂԼԱՄԱՋՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝		Ս.ԹԱՄԱՄԱՎԵՅԱՆ